

Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

17 հուլիսի 2015 թվականին կայացավ Արմավիրի մարզի Ջրառատ համայնքի ղեկավարի 2015 թվականի 1-ին կիսամյակի հաշվետվությունը:
Հաշվետվությանը ներկա էին Հ.Հ. Արմավիրի փոխարգպետ՝ Դավիթ Սամսոնյանը, Ջրառատ համայնքի ավագանու անդամներ՝ Արմեն Պողոսյանը, Սարիբեկ Բարսեղյանը, Միհրան Բաբուջյանը, Հովհաննես Խաչատրյանը, Սերոբ Մելքոնյանը, Գևորգ Մելքոնյանը և Ջրառատ համայնքի 76 բնակիչներ: Ջրառատ համայնքի ղեկավար Սամվել Գալստյանը հանգամանալից ներկայացրեց 2015 թվականի 1-ին կիսամյակի հաշվետվությունը : Ջրառատ համայնքի ավագանու անդամները շնորհակալ եղան գյուղապետի 2015 թվականի 1-ին կիսամյակի աշխատանքից համայնքի ղեկավար՝ Սամվել Գալստյանին համայնքում կատարած աշխատանքների նշելով որ աղբաթափությունը կատարվում է պատշաճ կերպով և 2015 թվականի 1-ին կիսամյակում բյուջեն 99,7 % կատարելու համար: Համայնքի բնակիչ՝ Ղարիբ Սարգսյանը հարց բարձրացրեց 2015 թվականի ոռոգման ջրերի հիմնախնդրի վերաբերյալ և ճանապարհների անմխիթար վիճակի վերաբերյալ: Համայնքի ղեկավար՝ Սամվել Գալստյանը պատասխանելով բնակչի հարցին ասաց, որ բազմիցս այդ հարցերը բարձրացվել է տարբեր ատյաններում հույսով ենք որ այս տարի այդ հարցերը լուծում կստանան:
Բնակիչներից հարց բարձրացրին բուժ. Ամբուլատորիայի համար նոր շենք կառուցման մասին:

Ջրառատ համայնքի ղեկավար՝



Ս.Գալստյան

Արձանագրությունը կազմեց Ջրառատ համայնքի
աշխատակազմի քարտուղար՝

Ս. Առաքելյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

17. հուլիսի 2015թ.

Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ-Ի ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Գործավարություն

2015թ. -ի 1-ին կիսամյակի ընթացքում համայնքի բնակիչներից ստացվել է 46 դիմումներ և առաջարկություններ, որոնք ստացել են իրենց համապատասխան լուծումները: Համայնքի բնակիչներին տրամադրվել են 291 հատ տեղեկանքներ, բնութագրեր: Հղվել են 95 հատ պաշտոնական գրություններ մարզային և ֆեդերալ ենթակայության կառույցների ղեկավարներին: Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 15 որոշում: Արձակվել է 38 կարգադրություն:

2. Ավագանու գործունեություն

2015 թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի ավագին գումարել է 2 արտահերթ և 3 հերթական նիստ: Արտահերթ նիստերը հրավիրվել են համայնքի համար խիստ հրատապ հարցերի քննարկման և լուծումներ տալու համար, մասնավորապես կատարվել է բյուջեյի փոփոխություններ: Ավագանու քննարկմանն են ներկայացվել 18 դիմումներ և ստացել իրենց համապատասխան լուծումները:

3. Գյուղատնտեսության ոլորտ

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի առկա հողատարածքներն ու ցանքերն են՝

Բնակավայրային նշանակության հողեր -320հա.

Գյուղ. նշանակության հողատարածք -564 հա, որից՝

Խաղողի այգի -5.1 հա

Պտղատու այգի -24.8հա ստացել ենք 670,0գ. բերք

2014 թվականին աշնանը կատարվել է 14,6հա հացահատիկի ստացել ենք 365,0գ. բերք 13,0հա բազմամյա խոտհարքներ, լոբի 6հա 170,0գ. բերք, կարտոֆիլ 9հա 1800,0գ.բերք բոստանային կուլտուրաները 19հա 66500,0 գ .բերք, վարունգ 18հա 19500,0գ. բերք, լոլիկը 23հա 17500,0գ. բերք, 1հա ստացվել է 380,0գ.բերք սոխ 1 հա և բանջարեղեն 36 հա ցանք ստացվել է որից ստացվել է 20100,0գ բերք որը շարունակելի է:

Անասնազլխաքանակ

Խոշոր եղջերավոր անասուններ 400 գլուխ, որից՝ կովեր 109 գլուխ

Մանր եղջերավոր անասուններ 61 գլուխ, ոչխար, որից՝ մայրեր 1

56 գլուխ խոզեր, որից մայրեր՝ 10

Մեղվաընտանիք -47, թռչուն -3117

4. Հողի հարկ և գույքահարկ.

2015 թվականին ընթացքում համայնքային բյուջեով նախատեսվել է 1100,0 հազար դրամ հողի հարկ: 01.07.2015 թ.-ի դրությամբ համայնքի հողօկտագործողներից զանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 1462,2 հազար դրամ հողի հարկ, որը կազմում է համայնքի տարեկան հողի հարկի 132,9 տոկոսը:

Գույքահարկը բյուջեի եկամտային մասով նախատեսվել է 1400,0 հազար դրամ: 01.07.2015 թվականի դրությամբ զանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 941,4 հազար դրամ, որը կազմում է տարեկան գույքահարկի 67,2% -ը :2015 թվականի բյուջեով նախատեսվել է 30,0 հազար դրամ տեղական տուրքեր և վճարներ մուտք 01.07. 2015 թվականի մուտք է եղել համայնքի բյուջե 00 հազ.դրամորը : 2015 թվականին բյուջեով պետության կողմից տարվա ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիան կազմել է 24950,1 հազար դրամ , որը ֆինանսավորվել է 100 % ու, համայնքի վարչական տարածքում գտնվող 2015թ սեփական եկամուտները նախատեսվել են 2780,0 հազար դրամ: 31.06..2015 թվականի դրությամբ սեփական եկամուտները փաստացի մուտքերը կազմել են 2551,4 հազար դրամ, սեփական եկամուտները կատարվել է 91,8%: Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարը նախատեսվել է 250,0 հազ. դրամ, զանձվել է մուտք է եղել 147,9 հազ.դրամ: 2015 թվականի բյուջեում սեփական եկամուտները կատարվել են 91,8%-ով: Օրենքով և իրավական ակտերով մուտք է եղել համայնքի բյուջե 151,0 հազար դրամ: Տարվա սկզբի մնացորդ – 411,3 հազար.դրամ:

Ծախսեր

Ջրատառի գյուղապետարանը 2015 թվականի ընթացքում կատարել է հետևյալ ծախսերը:

1. վճարել է ընթացիկ աշխատավարձ 10148,1 հազար դրամ
2. կատարել է թերթի բաժանորդագրության ծախս - 102,8 հազար դրամ
3. մասնագիտական ծառայության համար փոխանցվել է 328,31 հազար դրամ
4. համակարգչային ծառայության համար փոխանցվել է -44,8 հազար դրամ
5. փոխանցվել է էլեկտրոնային փոխանցվել է էլեկտրոնային փոխանցվել է -3179,5 հազար դրամ
6. փոխանցվել է գազի օկտագործման գումար – 340,2 հազար դր
- 7 Ծաղկեպսակների համար – 200,0 հազար դրամ
- 8 Գրենական պիտույքներ ձեռք բերելու համար փոխանցվել է -300,0 հազար դրամ
9. անապահով ընտանիքներին ցուցաբերվել է դրամական օգնություն -910.0 հազար դրամ:
10. Աղբահանություն համար 1398,0 հազ. դրամ:
11. Տեղեկատվական ծառայություն 99,7 հազար դրամ:
12. կենցաղ նյութերի համար ծախսվել է 90,0 հազար դրամ:
13. մանկապարտեզին փոխանցվել է սուբսիդյա 6000,7 հազար. դրամ:
14. կապի ծառայություն -302,6 հազար դրամ:
15. շենք շինության վերանորոգում 561,8 հազար դրամ
16. ներքին գործողումներ -200,0 հազար դրամ:
17. ներշրջակայացուցչական ծախսեր 600,0 հազար դրամ
18. Ապահովագրական ծախսեր 468,0 հազար դրամ

19. գույքի և սարքավորումների վարձակալություն 350,0 հազար դրամ
Մայիսի 28-ի կապկցությամբ հատկացվել է 300,0 հազար դրամ գումար միջոցառում կազմակերպելու համար:
Դպրոցի ավարտական դասարանի համար հատկացվել է 400,0 հազար դրամ նվերներ ձեռք բերելու համար:

Ազգաբնակչություն.

ա) Համայնքի փաստացի բնակչությունը կազմում է 3186մարդ:
2014 թվականի ընթացքում Ջրառատ համայնքում ծնվել է 11 երեխա, գրանցվել է 16 մահ:
Ընտանեկան նպաստ ստացողներ 48 ընտանիք
Համայնքում թոշակատուները 299 հոգի են:
5, Կրթություն և գիտություն

Համայնքում գործում է մեկ դպրոց 297 աշակերտով: Մեկ մանկապարտեզ՝ հաճախող 60 երեխայով և 11 աշխատողով:

6 Մշակույթ

Համայնքը ունի մեկ մշակութի տուն 6 աշխատողով, գործող գրադարան 1 աշխատողով:

Մշակույթի տանը գործում է ազգագրական պարերի խումբ՝ 32 երիտասերով և սպորտի խմբակներ բոնցկամարտի, արմֆայնդիկ, մարտեր առանց կանոնների և ծանրամարտ:

Երախաները մասնակցել են մրցումների և առաջնային տեղեր են զբաղեցրել:

7 Առողջապահություն.

Համայնքում գործում է բժշկական ամբուլատորիա 11 աշխատողով:

8 Զինակոչ.

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի գործուն աջակցությամբ պատշաճ կերպով կազմակերպվել է 2015 թ-ի ձմեռային զինակոչը ունեցել էք 11 զինակոչիկ և կատարվել է պլան առաջադրանքը:

9. Միջոցառումներ և սոցիալական ոլորտ.

Պատշաճ կերպով նշվում են Հ. Հ. պետական տոները և հիշատակի օրերը: Ըստ հարկի նշվում և կազմակերպվում են Հայաստանի Հանրապետության , մայիսի 9-ի Արցախի պատերազմի հաղթանակի օրը, մայիսի 28-ի Սարդարապատի և սահմանպանների տոնը:

Մասի 8-ին կանաց տոնի առիթով կազմակերպվել է միջոցառում և նվերներ է բաժանվել:

Պարբերաբար իրականացվում է գյուղի փողոցների աղբահանությունը:

10. Համայնքի հիմնախնդիրներ.

ա) Համայնքի հիմնախնդիրներից է համարվում համայնքային նշանակության ճանապարհների նորոգում << ասֆալտապատում>>, որը կկազմի մոտ 450,0 միլիոն դրամ:

բ) Վերանորոգման կարիք ունի նաև գյուղապետարանի շենքը, որի ծախսը կկազմի մոտ 20.0 միլիոն դրամ

գ) Մշակույթի տուն- 150,0 միլիոն դրամ:

դ) համայնքի հիմնախնդիրներից է նաև համայնքի նոր թաղամասերի արտիզյան ջրհոր հորատելը:

ե) Բժշկական ամբուլատորիայի նոր շենքի կառուցում- 30,0 միլիոն դրամ:

Ջրառատի գյուղապետ՝



Ս. Գալստյան